ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՀԵՏԱԶՈՏ ԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

2017

Խմբագրակազմ՝

Խմբագիր՝	*Աշխեն Բաբայան*
Սրբագրիչներ՝	*Արևհատ Պետրոսյան*
	Օֆելյա Սահակյան
	Լուսինե Թումանյան
Թարգմանիչ՝	*Նունե Ալավերդյան*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաձեռնողների կողմից..... 6

Նախաբան..... 7

Լոռու մարզի կանանց հիմնախնդիրների բացահայտման վերլուծություն..... 9

Խորին հարցազրույցի վերլուծություն.....22

Եզրակացություն.....24

Մեր մասին.....25

Նախաձեռնողների կողմից

Սույն գեկույցի տպագրությունը նախաձեռնող խումբն իր շնորհակալությունն է հայտնում բոլոր նրանց, ում անմիջական օգնությամբ և մասնակցությամբ հնարավոր դարձավ նշված աշխատանքների իրականացումը և արդյունքների տպագրությունը:
Աննա Մեյրանյանը, Հերմինե Մաշակարյանը, Անի Ասատրյանը, Տաթև Սահակյանը, Գայանե Ղևոնդյանը, Ազատուհի Իսրայելյանը, Արմանուշ Ֆրանգյանը, Անժելա Մամյանը, Սոնա Միրզոյանը, Արմիկ Հարությունյանն անմիջականորեն իրականացրեցին Լոռու մարզի կանանց հիմախնդիրների բացահայտման հետազոտությունը :
Շնորհակալություն ենք հայտնում նաև դասընթացավար Մելինե Մաղաքյանին և ծրագրի խորհրդատու Միլենա Աբրահամյանին:

ՆԱԽԱԲԱՆ

2017 թվականին <<Սպիտակի Հելսինկյան Խումբ>> իրավապաշտպան ՀԿ-ն <<Լոռու մարզի կանայք իրազեկ են և հզոր>> ծրագրի շրջանակներում իրականացրել է Լոռու մարզի կանանց հիմնախնդիրների բացահայտման վերաբերյալ հետազոտություն՝ շվեդական Kvinna till Kvinna հիմնադրամի աջակցությամբ:

Կազմակերպության կողմից 2015-2016 թթ-ին ծավալած գործունեության ընթացքում առնչվելով սեռով պայմանավորված խտրականության ենթարկված կանանց հետ՝ պարզ դարձավ, որ կանայք ունեն մի շարք խնդիրներ՝ ընտանեկան բռնություն, աշխատանքային իրավունքի ոտնահարում, սեռով պայմանավորված խտրականություն, վաղաժամ ամուսնություն, կրթություն ստանալու հնարավորության բացակայություն, ֆինանսական անկայունություն և այլն:

2017թ-ին իրականացրեցինք հետազոտություն՝ վերը նշված խնդիրների տարածվածության մակարդակի մասին ավելի ստույգ տեղեկատվություն ստանալու նպատակով: Նշենք նաև, որ նմանատիպ հետազոտություն իրականացվում էր առաջին անգամ:

<<Լոռու մարզի կանայք իրազեկ են և հզոր>> ծրագրի շրջանակներում Լոռու մարզում իրականացվել է հետազոտություն, որի նպատակն է եղել բացահայտել Լոռու մարզի կանանց հիմնախնդիրները: Հետազոտությունը իրականացվել է Լոռու մարզի 5 գյուղական (Շիրակամուտ, Մարգահովիտ, Օձուն, Լեջան, Մեծավան) և 5 քաղաքային (Սպիտակ, Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան, Տաշիր) համայնքներում: Հետազոտությունն իրականացվել է 2017 թվականի հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում: Հետազոտության վրա աշխատել են կանայք, որոնք եղել են <<ՍՀԽ>>-ի շահառուներ, նրանք նույնպես ունեցել են մի շարք խնդիրներ և հաղթահարել են մեր աջակցությամբ: Այդ խնդիրներն են ընտանեկան բռնությունը, վաղաժամ ամուսնությունը, սեռով պայմանավորված խտրականությունը և այլն: Նրանց համար իրականացվել է վերապատրաստման դասընթաց, որը՝ հաջողությամբ ավարտելով, նրանցից տասը ներգրավված են եղել հարցաթերթի և խորին հարցազրույցի հարցաշարի մշակման գործընթացում:

Հենց այս կանայք էլ իրականացրել են Լոռու մարզի հետազոտությունը, հավաքագրել արդյունքները: Նրանց մասնակցությունը շատ է կարևորվել այս հետազոտության

գործընթացում, քանի որ նրանք ավելի հեշտությամբ էին հասկանում խնդիրները և դրանց առաջացման պատճառները:

Հետազոտության ընթացքում կարևորություն է տրվել նաև հարցման անցկացման էթիկայի կանոներին:

Հետազոտությունը կրում էր քանակական և որակական բնույթ: Կիրառվել է համամասնական, պատահական ընտրանքի մոդել: Որակական հետազոտության ժամանակ, բացի պատահական ընտրանքի մոդելից, կիրառվել է հատուկ ընտրանքի մոդել: Ընտրանքի փաստացի ծավալը կազմել է 300 ռեսպոնդենտ:

Հետազոտության ընթացքում իրականացվել է թվով 200 հարցում՝ վերը նշված 10 համայնքում: Հարցմանը մասնակցել են 18 տարեկանից բարձր կանայք:

Իրականացվել է նաև 100 խորին հարցազրույց՝ վերը նշված 10 համայնքում:

Խորին հարցաթերթերը շոշափում էին կանանց կյանքին և կենսագործունեությանը վերբերող բոլոր ոլորտները, մասնավորապես անձնական, ընտանեկան, առողջապահական, իրավական, կրթական, սոցիալական, ժամանց, ավանդույթներ: Հարցազրույցն իրականացվել է տարբեր շերտերի ներկայացուցիչների հետ (դպրոցի տնօրեններ, ուսուցիչներ, բուժ հասատությունների բժիշկներ և բուժքույրեր, ինչպես նաև դեղատան աշխատակիցներ, հասարակական կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներ, մշակույթի տան աշխատակիցներ և գրադարանավարներ, բիզնես ոլորտի աշխատակիցներ), ովքեր համակողմանիորեն ներկայացնում էին տվյալ համայնքում կնոջը վերաբերող հիմնախնդիրները, նրանց ուժեղ և թույլ կողմերը: Խորին հարցազրույցները իրականացվել են նաև պատահական ընտրանքի եղանակով ընտրված կանանց հետ:

Լոռու մարզի կանանց հիմնախնդիրների բացահայտման վերլուծություն

Սույն հետազոտությանը մասնակցել են 22.5% 18-30 տարեկան, 45% 31-50 տարեկան, 32,5% 51 տարեկանից բարձր կանայք:

Հարցվողների 75%-ը ամուսնացած է, 12.5%-ը չամուսնացած, 4%-ը ամուսնալուծված և 8.5%-ը՝ այրի:



Հետազոտությունը ցույց տվեց, որ ռեսպոնդենտների 9%-ը հաշմանդամության թոշակառու է, 18.5 %-ը՝ թոշակառու, նպաստառու՝ 28.0%, աշխատող՝ 43%, նրանց 80.5%-ը չունի հաշմանդամության կարգավիճակ և 19.5%-ը՝ ունի և սա այն պարագայում, երբ հարցվողների 63.5%-ը բողոքում է առողջական լուրջ խնդիրներից: Չնայած հարցումների արդյունքում բացահայտված լուրջ խնդիրներին, այնուամենայնիվ, կանանց մեծ մասը՝ 59.8%-ը, լավատեսորեն է տրամադրված ապագայի նկատմամբ: Բավականին բարձր տոկոս է կազմում այն կանանց թիվը՝ 63%, ովքեր, ըստ արդյունքների, կարող են ինքնուրույնաբար վերահսկել սեփական կյանքն ու գործունեությունը, սակայն նրանց 30%-ը կրում է շրջապատի ազդեցությունը, և, հետևաբար, կանայք ավելի ենթարկվող են, մեծամասամբ՝ լռողի կարգավիճակում: Եվ, ինչպես նշում են կանայք, այս ամենն անընդհատ սթրեսի և լարվածության մեջ է պահում կնոջը, ինչի արդյունքում կանայք սկսում են ընդունել դեղորայք:

Վերոնշյալ գրաֆիկը ցույց է տալիս, որ կանայք հիմնականում բացասական վերաբերմունք ունեն այն կանանց նկատմամբ, որոնք չեն ցանկանում երեխա

ունենալ:



Հարցվողների 59%-ը կարծում է, որ կինը կարող է երկրորդ անգամ ամուսնանալ, սակայն այս դեպքում ևս նկատելի է բացասական վերաբերմունք այդ կնոջ նկատմամբ:



Ելնելով նախորդ հարցերի արյունքներից՝ կանայք իրենց դաստիարակության առանձնահատկությունների պատճառով կրել են բազում դժվարություններ, այնուամենայնիվ հարցվողների 48.5%-ը նշում է, որ կցանկանար դաստիարակել իր աղջկան այնպես, ինչպես իրեն են դաստիարակել:

Ինչպես երևում է գրաֆիկից, հարցվողների գերակշիռ մասը՝ 55%-ը, իրեն հոգեպես ճնշված չի զգացել կին լինելու պատճառով, սակայն իրականում նրանց գործողություններում մեծամասամբ սահմանափակումներ դրվել են, անգամ արտաքին տեսքին վերաբերող հարցերում 20.5%-ը ազատ չէ:



Ինչպես ցույց է տալիս հետազոտությունը, հայ կանանց մեծ մասը՝ 73%-ը, անտարբեր է արտաքինի նկատմամբ: Ընդամենը 15.5%-ն է կարևորում լավ տեսք ունենալը:



Հարցվողների մեծ մասը՝ 39%-ը, իր ձախողումները վերագրում է արտաքին հանգամանքներին և իր կյանքի անհաջողությունների համար մեղադրում է ուրիշներին: 28.5%-ը գիտակցում է սեփական ընտրության հետևանքները, իսկ 33%-ը գնտում է, որ երկու գործոններն էլ դեր են խաղացել իր կյանքում:

Գրաֆիկից պարզ է դառնում, որ կանանց մեծ մասը՝ 59%-ը, բավարարված չէ իր ներկա վիճակից և հնարավորության դեպքում արմատական փոփոխություններ կմտցնի իր կյանքում:



Գրաֆիկից պարզ է դառնում, որ կանանց մեծ մասը՝ 59%-ը, բավարարված չէ իր ներկա վիճակից և հնարավորության դեպքում արմատական փոփոխություններ կմտցնի իր կյանքում:



Ուշադրության է արժանի այն փաստը, որ հարցվողների 81%-ը կարևորում է ընտանիքում հավասարությունը, սակայն իրականությունն այլ է:



Սա վկայում է այն մասին, որ կանանց մեծ մասն ընտանիքներում իրենց լիարժեք անդամ մասամբ են համարում, քանի որ որոշումների կայացման գործընթացին երբեմն են մասնակցում: Այնուամենայնիվ կանայք են կրում կայացված որոշումների

հետևանքները: Չնայած ռեսպոնդենտների 42.5%-ը պնդում է, որ համատեղ են որոշում երեխայի դաստիարակության հարցերը, 34%-ը՝ ամուսիններով, սակայն ինչպես երևում է հաջորդ հարցի արդյունքներից տղամարդկանց մեծ մասը՝ 53.5%-ը, գնտնվում է արտերկրում և չի մասնակցում երեխաների դաստիարակությանը: Ծնողների մեծ մասը գտնում են, որ երեխան արդեն փոքր հասակից պետք է տեղեկացված լինի ընտանիքի ֆինանսական դրության մասին:



Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ կանանց 84%-ը պնդում է, որ երբևէ բռնության չի ենթարկվել, սակայն բռնություն ասելով կանայք հասկանում են միայն *ֆիզիկական բռնությունը*, իսկ *սեռական* և *հոգեբանական բռնությունը* չեն դիտարկվում որպես այդպիսին:

Կանանց 40%-ը պնդում է, որ իր ամուսինը հազվադեպ, բայց այնուամենայնիվ իրեն համաեմատում է այլ կանանց հետ, իսկ հակառակ դեպքում կանանց 62.5%-ը չի համեմատում իր ամուսնուն այլ տղամարդկանց հետ:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ հարցվողների մեծ մասն ամուսնացել է 17-18 տարեկանում, սակայն ամուսնության լավագույն տարիքը կնոջ համար դիտարկում է 25-30 տարեկանը:



Ինչպես երևում է գրաֆիկայից, հարցվողների 98%-ի ընտանիքում չկան պայմանագրային զինծառայողներ, իսկ այն ընտանիքներում, որտեղ կան՝ հաջորդող գրաֆիկից ակնհայտ է դառնում, որ նրանց ծառայությունը, այնուամենայնիվ, բացասաբար է ազդում կանանց կյանքի որակի վրա՝ 50%:



Հարցվողների 71.5%-ը չունի աշխատանք, 69%-ը պնդում է, որ եթե հնարավորություն ունենար մեծ հաճույքով կաշխատեր: 46.5%-ը պնդում է, որ չաշխատելու հիմնական պատճառը աշխատատեղերի բացակայությունն է: 95.5%-ը պնդում է, որ կնոջ կյանքում աշխատանքի առկայությունը շատ կարևոր է, քանի որ այն ապահովում է կնոջ ինքնուրույնությունը, ֆինանսական անկախությունը և կնոջ համար դառնում է ինքնահաստատման միջոց:



Ինչպես երևում է գրաֆիկից, կանանց 52%-ի մոտ գերակշռում է այն գաղափարը, որ կնոջ համար առաջնային է ընտանիքը և սերնդի շարունակման գործընթացը: 26.5%-ը ունի աշխատանք, սակայն նրանցից միայն 5%-ն է, որ աշխատում է իր մասնագիտությամբ:



Կանանց 97.5%-ը կարևորում է կրթության դերն իր կյանքում, սակայն միայն 68.5%-ն է մեծ կարևորություն տալիս կողակցի կրթությանը:



Ռեսպոնդենտների 56%-ը մասամբ տեղեկացված է սեփական իրավունքներից, իսկ 30%-ը թեև պնդում է, որ լիովին տեղեկացված է իր իրավունքներից, սակայն ակնհայտ է, որ նրանց մեծ մասը՝ 61%-ը, մտածում է, որ տղամարդիկ մեծ առավելություններ ունեն իրավական դաշտում:

Հարցվողների 71%-ը դրական վերաբերմունք ունի կին ղեկավարի նկատմամբ, 10.5 %-ը բացասաբար է վերաբերվում, իսկ 18.5%-ը չեզոք վերաբերմունք ունի: Անգամ կանանց 21%-ը գտնում է, որ կինը լավ ղեկավար չի կարող լինել:



Ինչպես երևում է գրաֆիկից, հարցվողների 75%-ը հետաքրքրված է իր առողջությամբ, 24%-ը հետաքրքրված չէ, իսկ 1%-ը մասամբ է հետաքրքրված: Չնայած սեփական առողջությամբ բարձր հետաքրքրվածությանը, այնուամենայնիվ 83.4%-ը միայն խիստ անհրաժեշտության դեպքում է դիմում բժշկի և հիմնականում անտեսում է առողջական խնդիրները: Նրանց մեծ մասի առողջական խնդիրների հետ կապված ծախսերը հոգում են ընտանիքի անդամները՝ մասնավորապես որդիները, և միայն 15.5%-ն է կարողանում ինքնուրույնաբար լուծել այդ խնդիրը:



Ինչպես երևում է գրաֆիկից, հայ կանանց 63%-ը ունի առողջական խնդիրներ:



Թեև կանանց բավականին մեծ մասը՝ 70.35%-ը, բացասաբար է վերաբերվում հղիության արհեստական ընդհատումներին, սակայն նրանց մեծ մասը, մասնավորապես՝ 49.5%-ը, ժամանակին դիմել է այդ քայլին՝ պատճառաբանելով ֆինանսական և առողջական խնդիրները: Նրանց միայն 45%-ն է, որ դիմել է համապատասխան բժշկի օգնության, մնացածը մասը հղիության արհեստական ընդհատումն իրականացրել է համապատասխան դեղորայքի և ժողովրդական

«հայտնի» միջոցների օգնությամբ:



Ակնհայտ է, որ կանանց որոշակի մասը՝ 36%-ը, ընդհանրապես տեղյակ չէ անվճար բուժօգնության կարգին, որոշ մասն էլ թեև տեղյակ է, սակայն չի կարողանում պաշտպանել իր իրավունքները:

Ինչ վերաբերում է ժամանցի կազմակերպման և ընկերների, սեփական շրջապատը ունենալու հարցերին, ապա այստեղ ևս բախվում ենք լուրջ խնդիրների: Չնայած 91.5%-ը ինքն է ընտրում իր ընկերներին, սակայն հոգսաշատ առօրյան խոչընդոտում է նրանց հաճախակի հանդիպումներին, ավելին՝ կանանց մեծ մասի՝ 79.5%-ի մոտ այդ ոլորտը ամուսնությունից հետո ամբողջովին փոխվում է:



Ըստ գրաֆիկի, կանանց 71%-ը կարողանում է օգտվել համակարգչից և 58.5%-ը օգտվում է սոցցանցերից: Ըստ արդյունքների կանանց 39%-ը չի սիրում նոր

ծանոթություններ և դրա պատճառով մերժում է անծանոթների ընկերության հայտը, 19%-ը խուսափում է անծանոթ մարդկանցից, 9.5%-ը ընդունում է և միայն 2.5%-ին է արգելված օգտվել համակարգչից:



Ըստ գրաֆիկի, կանանց 29%-ը պնդում է, որ ունեն հնարավորություն մասնակցելու մշակութային միջոցառումների և մասնակցում են, սակայն 27.5% է կազմում այն կանանց թիվը, ովքեր չունեն հնարավորություն, բայց ունենալու դեպքում կցանկանային մասնակցել: 21.5%-ը ակնհայտ անտարբերություն է ցուցաբերում այդ իրադարձությունների նկատմամբ:

Ինչպես երևում է գրաֆիկից, կանայք նախկինի նման մեծ կարևորություն չեն տալիս հայկական ավանդույթներին: Այնուամենայնիվ 64.5 %-ը դեռևս շատ է կարևորում <<կարմիր խնձորի>>-ի իմաստը, 34%-ը ընդհանրապես կարևորություն չի տալիս և 1.5 %-ը կարծում է, որ դա զույգերի խնդիրն է:



Ռեսպոնդենտների 82.5%-ը երբևէ չի հանդիպել դժվարությունների հավատքի պատճառով, միայն 6%-ն է խոստովանել, որ ունի դժվարություններ, իսկ 11.5%-ը երբեմն բախվում է դժվարությունների: Հարցվածների 73%-ը գտնում է, որ ինքը սնահավատ չէ, իսկ 26.5%-ը խոստովանել է, որ ունի սնահավատություն:



Թեև կանանց 99%-ը խիստ բացասական վերաբերմունք ունի նույնասեռականների նկատմամբ, այնուամենայնիվ 3.5%-ը խոստովանել է, որ առանչվել է դժվարությունների և խտրական վերաբերմունքի սեփական սեռական կողմնորոշման պատճառով: 96.5%-ը երբևէ չի առնչվել դժվարությունների:



Որպես ամփոփիչ հարց կանանց 83%-ն իրեն երջանիկ է համարում, 14%-ը երջանիկ չի համարում իրեն և միայն 3%-ն է մասամբ երջանիկ:

Խորին հարցազրույցի վերլուծություն

Վերը նշված 5 գյուղական և 5 քաղաքային համայնքներում, կանանց հիմնախնդիրների մասին ավելի մանրամասն և հավաստի տեղեկատվություն հավաքագրելու նպատակով իրականացվել է նաև թվով 100 խորին հարցազրույց: Հարցազրույցներն անց են կացվել տվյալ համայնքի դպրոցի տնօրենների, ուսուցիչների, բուժ. հասատությունների բժիշկների և բուժքույրերի, ինչպես նաև դեղատան աշխատակիցների հետ, հասարակական կազմակերպությաունների և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, մշակույթի տան աշխատակիցների, գրադարանավարների և բիզնես ոլորտի աշխատակիցների հետ, ինչպես նաև պատահական ընտրությամբ ընտրված կանանց հետ:

Խորին հարցազրույցի հարցաշարը բաղկացած էր հարցաթերթի նույն բաժիններից:

Առողջապահություն

Կանայք ունեն առողջական խնդիրներ, սակայն չեն զբաղվում այդ հարցով, քանի որ գումար չունեն նաև չեն վստահում իրենց համայնքի բժիշկներին: Նրանք նշում են, որ բժշկի դիմում են միայն այն դեպքում, երբ *<<դանակը հասնում է ոսկորին>>:* Հղիության արհեստական ընդհատմանը 100%-ը վատ է վերաբերվում, բայց միևնույն ժամանակ, այն տարածված է: Նշվեց նաև, որ ներկա պահին հղիության արհեստական ընդհատումների թիվը կրճատվել է, քանի որ նոր սերունդը տեղեկացված է և կարողանում է տարբեր միջոցներով խուսափել անցանկալի հղիությունից:

Իրավունքներ

Վերը նշված համայնքի բոլոր կանայք նշեցին, որ տեղյակ չեն իրենց իրավունքների մասին: Իրենց իրավունքներից որոշ չափով տեղյակ են այն կանայք, որոնք աշխատում են: Եվ այս կանայք ևս ունեն իրենց իրավունքների պաշտպանությանը վերաբերող խնդիր, քանի որ չեն տիրապետում պաշտպանության մեխանիզմներին:

Մեծամասնությունը նորմալ է վերաբերվում կին ղեկավարներին:

Ընտանեկան բռնություն

Կանայք խուսափում են մանրամասնել ընտանեկան բռնության մասին, բայց ասում են, որ տեղյակ են, որ իրենց համայնքներում կան նման դեպքեր: Որոշ կանայք էլ ասում են, որ դա սովորական բան է և կինն է երբեմն դրդում տղամարդուն բռնություն գործադրել: Նաև՝ գյուղական համայնքում նշում են, որ այդ գյուղը դատարկվել է,

արդեն ընտանիքներով էլ են թողնում հեռանում, հիմնականում տղամարդիկ դրսում են. <<...խի գյուղում տղամարդա մնացել, որ մի հատ էլ բռնության ենթարկվենք>>: Հիմնականում մեծահասակ կանանց կողմից նշվեց, որ բռնություն միշտ էլ եղել է ուղղակի. <<գյուղի կինը լուռ տարելա իրա խաչը>>:

Կանանց մեծ մասը հավաստում են, որ իրենք չեն ենթարկվում ընտանեկան բռնության: Ընտանեկան բռնության մասին լսել են, բայց հավաստում են, որ քիչ են նմանատիպ դեպքերը՝ «դե տուն է էլի ամեն ինչ էլ կարող է պատահել»: Կանայք ընտանեկան բռնություն ասելով հասկանում են հիմնականում միայն ֆիզիկական բռնությունը: Բայց այն, որ իրենց համար աշխատելը երազանքի պես մի բան է, բայց ամուսինը չի թողնում իրենց աշխատել, դա համարում են նորմալ երևույթ: Կանայք ընտանեկան բռնության են ենթարկվում ոչ միայն իրենց ամուսինների, այլ նաև իրենց սկեսուրների կողմից:

Աշխատանք

Հարցման ընթացքում բացահայտված մեծագույն խնդիրն է հանդիսանում աշխատատեղերի բացակայությունը: Բոլոր կանայք կարևոր են համարում աշխատանք ունենալը, բայց իրենց մխիթարում են այն հանգամանքով, որ նույնիսկ տղամարդիկ աշխատանք չունեն ու գնում են երկրից՝ արտագնա աշխատանքի: <<Տղամարդիկ չեն արգելում, որ կինը աշխատի, ուղղակի աշխատատեղ չկան, իրանց շատ կա՞, որ մի հատ էլ կանանց ընկնի>>: Այդ ժամանակահատվածում հիմնականում գյուղական համայնքներում կանայք անում են տղամարդու գործը՝ գնում են արտ՝ խոտ հնձում, հավաքում, անասնապահությամբ զբաղվում և կատարում են իրենց պարտականությունները՝ երեխայի խնամքն ու դասիարակությունը:

Ավանդույթներ և սովորույթներ

Բոլոր ոլորտների մասնագետները ասում են, որ մարդիկ արդեն այդքան էլ չեն կարևորում ավանդույթները, արդեն զարգանում են, բայց դեռ բոլորի համար կարևոր է մնում կնոջ կուսությունը: Բուժաշխատողները նշում են, որ նույնիսկ առաջին ամուսնական գիշերվանից հետո առաջացած խնդիրների դեպքում տանում են բժշկի և պարզում, թե ինչու կույս չէ իրենց հարսը, լինում են դեպքեր, որ նախօրոք են տանում բժշկի:

Հանդուրժողականություն կրոնների և նույնասեռականների հանդեպ

Հարցվողները նշում են, որ ազատ են կրոնի ընտրության հարցում, միայն Տաշիր համայնքի կանայք իրենց ազատ չեն համարում: Բոլոր կանայք համատարած վատ են վերաբերվում նույնասեռականությանը:

Ազատ ժամանց

Կանայք չունեն ժամանցի վայրեր ոչ քաղաքային և ոչ էլ գուղական համայնքներում: Կանանց միակ ժամանցը հարևանների հետ սուրճ խմելն է: Կանայք իրենց ժամանցը չեն կարողանում կազմակերպել: Այս ամենը առաջացնում է նրանց մոտ հոգնածություն և սթրես:

Սոցցանցերից օգտվում են, բայց հաճախ այդ հանգամանքը առաջացնում է հասուն տարիքի մարդկանց՝ հատկապես սկեսուրների դժգոհությունը, քանի որ, ըստ նրանց, տան հարսները ավելի շատ համակարգչի առաջ են և ուշադրություն չեն դարձնում տան գործերին:

Եզրակացություն

Սույն հետազոտության արդյունքներից պարզ է դառնում, որ Լոռու մարզի կանայք ունեն մի շարք խնդիրներ: Այն է.

- Լոռու մարզում շատ ցածր է կանանց իրավագիտակցության մակարդակը իրենց իրավունքների վերաբերյալ, ինչն իր հերթին առաջացնում է մի շարք խնդիրներ:
- Լոռու մարզում կանայք չունեն աշխատանք և այդ իսկ պատճառով տնտեսապես կախյալ են իրենց ամուսիններից:
- Լոռու մարզի կանայք ունեն առողջական խնդիրներ, բայց չունեն բավականին ֆինանսական միջոցներ բուժ. հաստատություններ դիմելու համար:
- Լոռու մարզի կանայք հաճախ ենթարկվում են բռնության, հիմնականում հոգեբանական բնույթի:
- Կանայք ունեն կրթության կարիք
- Կանայք չունեն բավական միջոցներ, հնարավորություններ՝ իրենց ժամանցը կազմակերպելու համար, ինչն էլ առաջացնում է կանանց մոտ սթրեսային և հոգեբանական ընկճված վիճակ:

Մեր մասին

<<Սպիտակի Հելսինկյան Խումբ>> իրավապաշտպան հասարա-կական կազմակերպությունը հիմնադրվել է 2010 թվականին: <<Սպիտակի Հելսինկյան Խումբ>>-ը իրավապաշտպան ՀԿ է, որը զբաղվում է մարդու իրավունքների ջատագովությամբ,միավո-
րում է ժողովրդավարության,հանդուրժողականության սկզբուն-
քները:
<<Սպիտակի Հելսինկյան խումբ>> իրավապաշտպան ՀԿ-ի առաքելությունն է տեղակա

ն,
տարածաշրջանային և հանրապե-
տական մակարդակներում իրավապաշտպանական գործունե-
ության հզորացումը:
<<Սպիտակի Հելսինկյան Խումբ>> ՀԿ-ն աշխատում է հետևյալ թիրախ խմբերի հետ՝

- սոցիալապես անապահով մարդիկ,
- երիտասարդություն

- կանայք
- Խոցել այլ խմբեր

<<ՍՀԽ>>-ն իր ռազմավարական գործունեության շրջանակներում, որպես <<թիրախային խումբ>> առավել կարևորում է կանանց և երեխաների հիմնախնդիրներն ու իրավունքների պաշտպանությունը:

Կոնտակտային տվյալներ՝

Ք. Սպիտակ, Լոռու մարզ, Հայաստան
Փ. Շահումյան 5/7
Հեռ՝(0255) 2 20 17; 099 39 61 70; 044 22 02 17
Էլ.փոստ spitakgroup2010@gmail.com